

ք. Երևան, 03.06.2015 թ.  
Ելք N° ԳԱ – 066

Ալավերդու Օրիուս կենտրոնի համակարգող  
Անուշ Էվոյանին

Հարգելի տիկին Էվոյան

Ի պատասխան Ձեր 03.06.2015թ. գրության՝ հայտնում ենք, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Ալավերդու պղնձաձուլական գործարանի նորակառույց ծխատարի և ծխնելույզի պլանային նորոգման աշխատանքներով պայմանավորված՝ ժամանակավորապես դադարեցվել է այդ ծխատարի և ծխնելույզի շահագործումը: Նոր ծխատարի և ծխնելույզի նորոգման աշխատանքները կտևեն մինչև 45 օր: Այդ ժամանակահատվածում գործարանի մետալուրգիական գործունեության արդյունքում գոյացող ծխագազերը հեռացվելու են նախկին՝ 100 մետրանոց, ծխնելույզով:

Ընկերությունը հայցում է Ալավերդու և բացասական ազդեցության հնարավոր բարձրացման ենթակա այլ համայնքների ազգաբնակչության ըմբռնումը:

Ընկերությունը հայտարարում է հին ծխնելույզի շահագործման ժամանակահատվածում Ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարները բնապահպանական փաստացի ազդեցությանը համաչափ վճարելու պատրաստակամության մասին և այդ ուղղությամբ քննարկումներ է իրականացնելու ՀՀ բնապահպանության նախարարության հետ:

Հարգանքով՝

Գագիկ Արզումանյան

Տնօրեն